
**ՀՈՄԱՆԻՇ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԸ
ՀԱՅԵՐԵՆՈՒՄ, ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

ՂԱԶԱՐՅԱՆ Հ. Զ.

«Հոմանշություն» եզրույթը հաճախ օգտագործվում է «խմաստի նույնություն» նշանակությամբ: Ինչպես գիտենք, յուրաքանչյուր լեզվում գոյություն ունեն բառեր, որոնք օժտված են նույն կամ մոտ իմաստներով, ասել է, թե հոմանշային հարաբերության մեջ են: Այս հոդվածում ուսումնասիրվող լեզուները՝ հայերենը, ռուսերենն ու անգլերենը, բավական հարուստ են հոմանիշ բառերով, քանի որ նրանց բառապաշարը կազմավորվել է տարբեր աղբյուրներից: Այսպես, օրինակ՝ հայերենի բառապաշարի մաս են կազմում գրաբարից և միջին հայերենից, ինչպես նաև արևմտահայերենից և տարբեր բարբառներից եկած բառերը: Ռուսերենը պարունակում է բառեր համառուսական, արևելառուսական բառապաշարից, իսկ անգլերենի բառապաշարում տեղ են գտել անգլո-սաքսոնական, ամերիկյան, ավստրալական և այլ բարբառներից եկած բառերը: Բացի այս աղբյուրներից, նշված լեզուների բառապաշարը հարստացել է նաև բազմաթիվ փոխառություններով և պատճենումներով: Փոխառված և պատճենված բառերի առկայությունը ցանկացած լեզվում բացատրվում է ազգերի երկարատև տնտեսական, քաղաքական, ռազմական, մշակութային հարաբերություններով: Այս հանգամանքը, անհրաժեշտ է նշել, բացասական երևույթ չէ, այլ ճիշտ հակառակը, քանզի այն զարգացնում է տվյալ լեզվի բառապաշարը՝ դարձնելով ավելի հարուստ ու պատկերավոր: Այս փոխառությունները նույնպես հոմանիշների առաջացման աղբյուր են՝

Իմաստի նույնության մասին խոսելիս հարկ է նկատի ունենալ, որ լեզվում չկան իրական հոմանիշներ, այսինքն՝ չկան այնպիսի երկու բառեր, որոնց իմաստները կատարելապես համընկնում են: Դրանք իրարից տարբերվում են իմաստաբանական, գործառական-ոճական և կապակցական առանձնահատկություններով:

Բառերը կարող են իրենց հոմանիշներն ունենալ ոչ միայն բառային, այլ նաև տվյալ հասկացությունն ու երևույթն ավելի պատկերավոր արտահայտող լեզվական միավորների՝ դարձվածքների շարքում: Այս դեպքում բառերն ու դարձվածքները, լեզվի իմաստակիր միավորներ լինելով հանդերձ, միմյանցից տարբերվում են վերը նշված առանձնահատկություններով:

Դարձվածքային միավորները կարող են իրենց հոմանիշներն ունենալ ոչ միայն առանձին բառերի, այլ նաև տվյալ հասկացությունն ու երևույթն ավելի պատկերավոր արտահայտող լեզվական միավորների՝ դարձվածքների շարքում:

¹ Palmer F. R. Semantics. A New Outline, Cambridge, 1982, p. 43.

² Զահուկյան Գ., Աղայան Է., Առաքելյան Վ., Քոսյան Վ., Հայոց լեզու, մաս I, պրակ Ա, Ե., էջ 237:

Դարձվածքային հոմանիշներ ասելով՝ հասկանում ենք այն միավորները, որոնք ունեն նույն կամ մոտ իմաստներ, հարաբերակից են նույն խոսքի մասին և մեծ մասամբ օժտված են շարահյուսական նույն կապակցելիությամբ: Նրանց բաղադրիչները չեն կարող փոխարինել միմյանց³:

Հոմանիշ դարձվածքները կարող են միավորվել հոմանշային բներում, խմբերում և շարքերում: Առաջինները պարունակում են այնպիսի դարձվածքներ, որոնք ունեն ընդհանուր բաղադրիչ՝ սիրտը փափուկ – սիրտը բարակ (նրբազգաց), *свернуть голову – свернуть шею* (սպանել), *have a good head on one's shoulders – have one's head screwed on right* (խելացի լինել), երկրորդները՝ դարձվածքներ, որ իրենց կազմում չունեն ոչ հոմանիշ, ոչ ընդհանուր բաղադրիչներ՝ երեսը պատռած – մազը կտրած (անամոթ), *белая горячка – зеленый змий* (արբեցատենդ), *down at heel – out at elbow* (վատ, աղքատիկ հագնված), երրորդները, որ պարունակում են թե՛ հոմանիշ և թե՛ ոչ հոմանիշ բաղադրիչներ՝ շան լափը գլխին ածել – գլխին լվացքաջուր լցնել (խիստ կշտամբել), *губы бабка – дубовая голова* (հիմար մարդ), *the apple of one's eye – the desire / light of sb's eyes* (մեկի աչքի լույսը)⁴:

Սույն հոդվածի նպատակը հայերենի, ռուսերենի և անգլերենի՝ զույների և մարմնի մասերի անվանումներ պարունակող հոմանիշ դարձվածքների ուսումնասիրումն ու զուգադրումն է:

Դարձվածքների հոմանշությունն ուսումնասիրելիս անհրաժեշտ է նկատի ունենալ, որ հոմանշային շարքերի մեջ մտնում են նույն կառուցվածքն ունեցող դարձվածքները:

Նախադասության կառուցվածք ունեցող դարձվածքային միավորները կազմում են առանձին հոմանշային շարքեր, օրինակ՝

• գլխիդ մեռնեմ – գլխիդ մատաղ (մեկի հանդեպ նվիրվածության, սիրո, փաղաքշանքի արտահայտություն)

• բերանում տաք ջուր չի մնում – բերանում թան չի մնում – բերանում լոբի/սիսեռ/ոսպ չի մնա / չի թրջվի (բացբերան է)

• փորում այբի կտոր չկա – գլուխը այբի կտոր չկա – փորը ճղես նե մի այբ չի վեր ընկնիլ – բողազը հուպ տաս նե, մի այբ չի վեր ընկնիլ (անգրագետ է)

• սևին սապոնն ի՞նչ կանի, խնին՝ խրատը – կարմիր կովը կաշին չի փոխի (սովորությունը չի փոխվի)

• քար բռնես՝ կանաչ դառնա – ճանապարհիդ կանաչ բուսնի (ամենուրեք հաջողության հասնես)

• *кровь стывает в жилах – кровь леденеет в жилах* (արյունը երակներում սառչում է վախից, հուզմունքից)

³ Шанский Н. М. Фразеология современного русского языка, М., 1985, с. 52.

⁴ Кунин А. В. Курс фразеологии современного английского языка, М., 1986, с. 111.

• *сердце дрогнуло – сердце екнуло – сердце замирает* (սիրտը կանգնեց հուզմունքից, անհանգստությունից)

• *one's heart sank into his boots – one's heart stands still* (սիրտը վախից կանգ առավ):

Հասկացություն արտահայտող դարձվածքները միմյանց հետ հոմանշային շարքեր են կազմում: Ընդ որում, իրենց բաղադրիչների իմաստից և բնույթից կախված, հոմանիշ դարձվածքները լինում են նույնանիշ և համանիշ: Նույնանիշ են այն հոմանիշ դարձվածքները, որոնք արտահայտում են նույն իմաստը և կարող են հեշտությամբ փոխարինել իրար՝

• *թևերի տակ բարձ դնել – թևերի տակ ձմերուկ դնել – թևերի տակ ձու դնել* (մեկին սին հույսեր տալ)

• *սիրտը պայթել – սիրտը տրաքել – սիրտը ճաքել* (համբերությունից դուրս գալ)

• *աչքի լույսը խավարել – աչքի լույսը մարել* (կուրանալ)

• *լեզուն իրեն պահել – լեզուն իրեն քաշել – լեզուն փոքր գցել* (լռել)

• *գլխին զոռ տալ – ուղեղին զոռ տալ* (ճգնել հասկանալ, ըմբռնել)

• *ձեռքը ծուռ – ձեռքից քաշ – աչքի սուրմա թոցնող – աչքից մազ հանող* (ճարպիկ գող)

• *напиться до зеленого змия – напиться до белой горячки* (թունդ հարբել)

• *дурья голова – дубовая голова* (հիմար)

• *большое сердце – доброе сердце* (բարի, բարեսիրտ)

• *умная голова – ученая голова* (խելացի անձ)

• *be soft in the head – be touched in the head* (հիմար, անխելք)

• *be out of one's head – be off one's head* (խելացնոր լինել)

• *not to lift a finger (to help sb) – not to lift a hand (to help sb)* (մատը / ձեռքը չշարժել մեկին օգնելու համար):

Ավելի շատ են համանիշ դարձվածքները: Դրանցով հայերենն առանձնապես հարուստ է: Ընդհանրապես քիչ են համանիշ չունեցող միավորները: Համանիշ են այն դարձվածքները, որոնք արտահայտում են ոչ թե ամբողջությամբ նույն, այլ մոտ իմաստ: Սովորաբար դարձվածքային համանիշների շարքերն ունենում են երեք և ավելի բաղադրիչներ: Ամենից շատ համանիշների շարքեր են կազմվում այն դարձվածքներից, որոնք բնութագրում են մարդու բնավորության գծերը, ինչպիսիք են աշխատասիրությունը, վախկոտությունը, ժլատությունը, ազահությունը, անզրթությունը, անպարկեշտությունը, խելամտությունը, քաջությունը, խորամանկությունը, հիմարությունը, բարությունը, չարությունը, թեթևամտությունը և այլն: Բերենք համանիշ դարձվածքների մի քանի շարք հայերենում, ռուսերենում և անգլերենում՝

• *աչքերը փակել – աչքի որդը / ճիճուն կոտրել – քուն գալ աչքին* (քնել)

• *գլուխ թեքել – վիզ ծռել – ոտերն ընկնել – գլուխ խոնարհել* (խնդրել, աղաչել, ստորանալ)

• սիրտը ալեկոծվել – սիրտը տակն ու վրա լինել – սիրտը վեր ու նիստ անել (հուզվել)

• ձեռքը փակ – ձեռքը պինդ (ժլատ)

• սիրտը ասել – սիրտը զգալ (կանխազգալ)

• падать / валиться в ноги – пасть к ногам (խնդրել, աղերսել)

• простым глазом – невооруженным глазом (անզեն աչքով)

• глаз набит – рука набита (մեկը փորձառու է ինչ-որ բանում)

• руки короткие – руки не доходят (ժամանակ, հնարավորություն չկա ինչ-որ բան անելու)

• узы крови – зов крови (ազգակցական կապ)

• prick up one's ears – strain one's ears – cock one's ears (լսողությունը լարել)

• grind one's teeth – grate one's teeth (ատամները կրճատացնել ցրտից, զայրույթից)

• hold one's tongue – keep one's tongue between one's teeth (լռել, լեզուն ատամների արանքում պահել)

• thrust dust into sb's eyes – draw the wool over sb's eyes (խաբել, աչքերին թոզ փչել)

Նկատում ենք, որ դարձվածքները, ինչպես և առանձին բառերը, հոմանշային շարքեր են կազմում միմյանց հետ: Այդ շարքերը կարող են լինել երկանդամ, եռանդամ և բազմանդամ: Հարկ է նշել, որ դիտարկվող լեզուներից հայերենը շատ հարուստ է նման շարքերով, և այդ շարքերն ավելի բազմանդամ են, քան մյուս լեզուներում: Բերենք մի քանի նման շարք՝

• աչք ածել – ակն ածել – աչք գցել – աչքը վրան պահել – աչքը տնկել (նայել, դիտել)

• գլխի ընկնել – գլուխ հանել – գլուխը մտնել – մատը կծել (հասկանալ, ըմբռնել)

• սիրտն ուտել – ծուխը քթածակերից հանել – սիրտը մաշեցնել (տանջել, չարչարել)

• երեսին թքել – շան լափը գլխին ածել – գլխին լվացքաջուր լցնել – գլխին կարկուտ թափել (կշտամբել)

• աչքը ծակ – ձեռքը փակ – օձ խուզող – ձեռքը գոց (ազախ, անկուշտ, ժլատ)

• կողը հաստ – ճակատը պինդ (համատ)

• գլուխը դատարկ – գլուխը հաստ – գլուխը դդում (հիմար անձ)

• дубовая голова – дырявая голова – мозги не варят – без головы (հիմար)

• с ног до головы – до мозга костей (ամբողջությամբ)

• буйная голова – бедовая голова – забубенная голова (քաջ, խիզախ)

• down in the mouth – broken - hearted (հուսահատ վիճակում)

• spin sb's head – steal sb's heart (գլուխը պտտեցնել, մոլորեցնել – սիրտը գողանալ):

Դարձվածքային հոմանիշների իմաստային առանձնահատկություններից մեկն այն է, որ դրանք կարող են լինել հատկաբանական (իդիոմատիկ) և բառային:

Իդիոմատիկ հոմանիշներն ունեն իմաստային ամբողջականություն, և այդ իմաստի նրբերանգներն ի հայտ են գալիս բառային միջավայրում: Այս հոմանիշներն օժտված են ոճական մեծ բազմազանությամբ: Դրանց բնույթը պայմանավորված է հոմանշային շարքի մեջ մտնող դարձվածքների իմաստների բնույթով: Բազմիմաստ դարձվածքները կարող են հոմանշային տարբեր շարքեր կազմել իրենց տարբեր իմաստներով:

Բառային արժեք ունեցող հոմանիշ դարձվածքներն օժտված են բառիմաստային, քերականական, ոճական այն բոլոր առանձնահատկություններով, որ բնորոշ են բառերին: Այս կարգի հոմանիշ դարձվածքները լինում են անվանական (գոյականական, ածականական, մակբայական) և բայական: Բերենք մի քանի օրինակ.

գոյականական հոմանիշներ

արյան ձայն - արյան կանչ - արյան կապ (ազգակցական կապ), սրտի տիրուհի - սրտի թագուհի (սիրած էակ), ատամի խարջ - ատամի մարդ (թույլ, անուժ մարդ, հաղթահարելի ուժ), թույլ բերան - ծակ բերան (բաց բերան մարդ), տան գլուխ - ընտանիքի գլուխ (տան մեծը, գլխավորը, տղամարդը), *тылая голова - медный лоб - голова два уха* (բուր, համառ, հիմար անձ), *дама сердца - избранник сердца* (ընտրյալը, սիրած էակը), *a thick head - a wooden head* (հիմար մարդ), *a kind heart - a big heart - a heart of gold* (բարեսիրտ անձ), *a heart of stone - a hard heart* (դաժան մարդ), *good blood - high blood - blue blood* (ազնվական արյուն).

ածականական հոմանիշներ

գլուխը դատարկ - գլուխը հաստ - վիզը հաստ (հիմար), սիրտը ժանտ - սիրտը քար (դաժան, անգուր), ճակատը բաց - ճակատը պարզ - երեսը բաց - երեսը սպիտակ - երեսը պարզ (պարզերես, ազնիվ), կարմիր արևից ընկած - կանաչ տերևից ընկած (վաղամեռիկ), *доброе сердце - золотое сердце - большое сердце* (բարի), *без головы - без царя в голове - голова еловая - голова садовая - солома в голове* (հիմար), *a cool head - a level head* (պաղարյուն, հավասարակշռված, հանգիստ I նշան.), *a good head - a strong head* (շատ խմող, սակայն չհարբող).

մակբայական հոմանիշներ

ճակատ առ ճակատ - ծնոտ առ ծնոտ - երես առ երես (դեմ առ դեմ), մինչև բուկը - մինչև կոկորդը - մինչև վիզը (ամբողջովին), *в головах - в головы (голову)* (գլխի տեղը պառկելիս), *лицом к лицу - лоб в лоб* (դեմ առ դեմ), *at heart*

⁵ Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, Ե., 1982, էջ 311:

– at the bottom of one's heart (սրտի խորքում), with heart and hand – with a heart and a half (մեծ ցանկությամբ, եռանդով), off one's head – out of one's head (խելքը թոցրած)։

բայական հոմանիշներ

աչքի ընկնել – աչքի զարնել (նկատվել), ծնկները ծեծել – ծնկները զարկել (լալ, սգալ, ողբալ), ականջը ծակել – ականջը խարտոցել – ականջը սղոցել (տհաճ լինել լսողության համար), քթին դիպչել – քթով ընկնել (հոտ զգալ), գլուխը դալմադալի տակ դնել – գլուխը ցավի տակ դնել (իրեն նեղություն պատճառել, չարչարվել), մեծ սիրտ ունենալ – լայն սիրտ ունենալ – բարի սիրտ ունենալ – ոսկի սիրտ ունենալ (բարի, մեծահոգի, բարյացակամ լինել), ударить в голову – бросаться в голову (արբեցնել), довести до белого каления – довести до красного каления (խիստ բարկացնել), have sb's blood up – make sb's blood boil (մեկին խիստ զայրացնել, կատաղեցնել), do brown – beat sb black and blue (մեկին սաստիկ ծեծել), have a big mouth – have a long tongue (շատախոս լինել)

Բավական մեծ թիվ են կազմում այն հոմանիշ դարձվածքները, որոնք կազմված են միանգամայն տարբեր բաղադրիչներից, ինչպես օրինակ՝

- կարմիրը կապել – ականջը կտրել (նշանել)
- դեղին սարդ – դարչնագույն ժանտախտ (ֆաշիզմ)
- կանաչ պսակը հյուսել – սև շան հանդիպել (ամուսնանալ)
- սևերես անել – սև էջին նստեցնել (խայտառակել, վարկաբեկել)
- սիրտը փորն ընկնել – թուքը բերանում չորանալ – լեղին ջուր կտրել (սաստիկ վախենալ)
- գլուխ թեքել – վիզ ծռել (խնդրել, աղերսել, չորանալ)
- օձի լեզու բանեցնել – բերանից ջափահիր թափել (պերճախոսել)
- голубая кровь – белая кость (ազնվական անձ)
- белая горячка – зеленый змей (արբեցատենդ)
- с ног до головы – до мозга костей (ամբողջովին)
- мозги не варят – без головы (հիմար)
- see pink elephants – drink till all 's blue (հարբել)
- do brown – beat sb black and blue (ուժեղ ծեծել)
- spin sb's head – steal sb's heart (խաբել, մոլորեցնել)։

Դիտարկվող լեզուների դարձվածքային հոմանիշներն ուսումնասիրելիս նկատում ենք, որ որոշ հոմանշային շարքեր կարող են ունենալ իրենց համարժեք շարքերը մյուս լեզուներում, օրինակ՝

- արյունը կապույտ – արյունը կարմիր – голубая кровь – белая кость – good blood – high blood – blue blood
- բերանը փակել – լեզուն իրեն քաշել – закрывать рот – держать язык за зубами – keep one's mouth shut – keep one's tongue behind one's teeth

• գլուխը դդում – գլուխը դատարկ – գլուխը մի կոպեկի խելք չկա – գլուխը մի այր չկա – գլուխը հաստ – еловая голова – мякинная голо-ва – голова садовая – голова дубовая – дурья голова – голова два уха – a wooden head – a pumpkin head – a mutton head – a thick-headed thing:

Ուսումնասիրելով հայերենի, ռուսերենի և անգլերենի դարձվածքային հոմանիշները՝ նկատում ենք հետևյալը.

ա) նշված բոլոր լեզուներում առկա են թե՛ համանիշ և թե՛ նույնանիշ դարձվածքային հոմանիշներ.

բ) բոլոր լեզուներում հոմանիշ դարձվածքները կազմում են հոմանիշային շարքեր: Հարկ է նշել, որ ամենաբազմազանն ու ամենաբազմանդամը հայերենի հոմանիշային շարքերն են: Հոմանիշ դարձվածքները կարող են ունենալ միանգամայն տարբեր բաղադրիչներ.

գ) բոլոր լեզուներում հանդիպում են կառուցվածքային տարբեր տիպերի միավորներ: Դարձվածքների գլխավոր անդամը իմաստային տեսակետից գույներն ու մարմնի մասերն անվանող բաղադրիչներն են, իսկ շարահյուսական առումով գլխավոր անդամը կախված է տվյալ դարձվածքի կառուցվածքային տիպից: Բաղադրիչների միջև շարահյուսական հարաբերություններն արտահայտվում են հոլովական վերջավորություններով, ինչպես հայերենում ու ռուսերենում, և նախդիրներով, ինչպես ռուսերենում և անգլերենում: Դարձվածքներում գործում են անվանական և բայական քերականական կարգեր, որոնք որոշ դեպքերում իմաստազատիչ դեր ունեն.

դ) երեք լեզուներում դիտարկվում են նույն իմաստն արտահայտող հոմանիշային շարքեր: Այդ շարքերի անդամները կարող են տարբերվել իրենց նրբիմաստներով: Ուսումնասիրված դարձվածքներն ունեն ոճական տարբեր կիրառություններ: Դրանք օգտագործվում են ժողովրդախոսակցական լեզվում, գրքային ոճում, բարբառներում: Դրանցով բավական հարուստ է գեղարվեստական գրականությունը.

ե) նկատվում են հոմանիշային այնպիսի շարքեր, որ առկա են միայն այս կամ այն լեզվում: Սրան հակառակ՝ որոշ հոմանիշային շարքեր առկա են դիտարկվող երկու կամ երեք լեզվում:

Տարբեր լեզուներում գոյություն ունեցող նույնիմաստ համարժեք հոմանիշային շարքերը վկայում են հիշյալ լեզուները կրող ժողովուրդների լեզվամտածողության ընդհանրությունների մասին, իսկ միայն մեկ լեզվին հատուկ հոմանիշ դարձվածքների առկայությունը խոսում է տվյալ ժողովրդի լեզվամտածողության յուրահատկությունների մասին:

ФРАЗЕОЛОГИЧЕСКИЕ СИНОНИМЫ В АРМЯНСКОМ, РУССКОМ И АНГЛИЙСКОМ ЯЗЫКАХ

КАЗАРЯН А. З.

Резюме

Фразеологические синонимы – это различные фразеологические единицы, которые имеют тождественные или близкие значения,

соотносятся с одной и той же частью речи и в большинстве случаев вступают в те же синтаксические связи. Указанные единицы могут дифференцироваться оттенками значения, стилистической окраской и сферой употребления.

Исследования показывают, что фразеологические синонимы разных типов и строений образуют синонимические ряды. Одни ряды могут быть присущи одному языку, другие же могут иметь эквивалентные ряды в других языках. Этот факт свидетельствует об общностях и различиях языкового мышления народов – носителей этих языков.

PHRASEOLOGICAL SYNONYMS IN ARMENIAN, RUSSIAN, AND ENGLISH

H. GHAZARYAN

Abstract

Phraseological synonyms are the units, which have the same or similar meanings, belong to the same part of speech, and mainly possess the same syntactic combinations. These units can differ in connotation, style, and use.

Research shows that phraseological synonyms of different kinds and different structure can make sets of synonyms. Some are inherent in one language, whereas others can have equivalents in other languages. This fact comes to prove similarities and disparities in the linguistic thinking of different speakers.